մահուանից յետոյ կաթողիկոսներն, անձամբ տարէ ցտարի պատարագ էին մատուցանում Նորա յիշատակին, պաշտաման դրամ բաժանում վանականներին և կերակրում աղքատներին, որ աւանդաբար պահպանւում էին մինչև Դաւիթ և Մելքիսեդ կաթուղիկոսները։ Վրդանէս մեռաւ ըստ Դաւրիժեցու ՉԽԲ (=1493) թուին Ոճոպում իւրայինների մօտ, ուր քաշուել էր ծերութեան օրերում։ Նորա դամբարանը գտնւում է վանքի պարսպից դուրս, դէպի հարաւ, գիւղին նայող բլրի վերայ. խաչարձանը քանդուել է և միայն մի կտորը մնացել. խաչարձանի առաջ դրուած է մի տափակ գերեզմանաքար եպիսկոպոսական գաւազանով զարդարուած և արձանագրութեամբ (Ցաւել. Ա. 182), որից իմանում ենք, թէ Նորա հօր անունը Ամբսիոս կամ Ամբասիոս էր, «թոռն Ապուտահլին, որդոյ Ղութլու բէկին, թոռն Դեղկա և մեծի Սրկար իշխանին»։

Գիւղի եկեղեցու բակում գտնւում է մի գերեզմանաքար մի կողի վերայ ելնդաւոր բուսկի և ջամ այսպիսի արձանագրութեամբ. «Այս է տապան Ամիրին որդի Ա (գուցէ և սա, կցուած է) Տիլբէկին թոռն Ամիրսոսին թվ. ՉԾ» (=1501)։ Ձենք կասկածում, թէ այս Ամիրսոսը և Վրդանէս եպիսկոպոսի տապանաքարի երկբայութեամբ կարդացուած Ամբասիոսը նոյն անձնաւորութիւնները լինին, ուրեմն և Ամիլ բէկը Վրդանէսի եղբայրն է, իսկ Ամիրը եղբօրորդին։ Դաւրիժեցին էլ պատմում է, որ Նորա ազգականները այստեղ էին ապրում։

Այսուհետև Ածոպ գիւղի կամ վանքի մասին ըստանում ենք աւելի յաճախ տեղեկութիւններ վանքի արձանագրութիւններից, որ, ինչպէս տեսանք չինուած է 1571 թուին Յովհաննէս եպիսկոպոսի օժանդակութեամբ։ Սորա յաջորդն էր Մարտիրոս եպիսկոպոս. երկուսի շինարարութեան մասին արդէն խօսել ենք (*)։ Մարտիրոսի ժամանակն էր կամաւոր միայնակեաց Մելիքը, որ աշխատում էր մինչև իւր ծերութեան օրերն այս վանքում, նուիրելով «զիւր ձեռաւք տնկած այգին սբ. Աստուածնին Խոտակերաց սբ. Նշանիս» և ապա «զ. քթոց մեղրի, զի միաբանք սբ. Աստուածնին հանապազ զմայլին գինով եւ քաղցրանան մեղրով»։ Նուիրել է նաև մի Տարեգիրք, այսինքն ճաշոց։ Տէր Ղուկաս կուսակրօն ճգնազգեաց կրօնաւորը բոլոր միաբանների բազմերախտ մօր Խաթունջան տնտեսի հետ նուիրել է մի արծաթի սկիհ։ Յիշատակուած են Մարտիրոս եպիսկոպոսի հետ և վանքի միւս միաբաններից Ղազար հերպետ, տէր Ղուկաս կրօնաւոր, Մելքի միայնակեաց, Խաթունջան տնտես, «տէր Ղազար հայր վանացս», և ուրիշ միաբաններ առանց անունների։ Ցայսմաւուրքի գրիչն է ծերունի Սարգիս մոնոզոնիկ (**)։

Նոյն Մարտիրոս եպիսկոպոսից մնացել է և մինչեւ այժմ գիւղի եկեղեցու մէջ մի արծաթի, ոսկէջրած, հաւասարակող խաչ՝ Խոտակերաց սուրբ Միանս անունով. խաչի թեւերին ամրացրած է մի մի քար, ինչպէս և կեդրոնում, որ աւելի մեծ է. խաչի յետեւի կողմից փորագրուած է հետեւեալը.

«Սբ. Նշանս Խոտակերաց բարեխաւս է Մարտիրոս եպսկպսին | ծնողացն Զութղու բէգին, որ նորոգեց իւր յիշատակի Սաթլմշին տր. Բարսեղին թվ. ՌՀԳ» (= 1624)։

Վանքի մի շարք արձանագրութիւնները 1671 թուականից զանազան նուիրաբերութիւններով Մարտիրոս գիւղի ազգակցութեամբ իրար կապուած «պարոն»ների կողմից, յիշել ենք արդէն, ենթադրաբար նրանց Պռոշեան տոհմի շառաւիղներ և Իսրայէլ Օրիի ազգակիցներ համարելով (*)։

ԺԸ. դարի սկզբում վանքի առաջնորդն էր տէր Ովանէս, որի գերեզմանաքարը զարդարուած է եպիսկոպոսական հովուական գաւազանով, օձ ու կարիճով. «Այս է տապան տր. Ովանեսին թվ. ՌՃԿԱ (= 1712)»։

Ըստ Ալիշանի 1704 թուին «առաջնորդ վանացն Օձոպու էր Թադէոս վարդապետ»(**). բայց Նորա գերեզմանաքարը թուագրուած է 1718 ով. «Ցիշատակ է տապանս առաջնորդ / Թաթէոս . . . (չի կարդացուում, երկու բառի տեղ), թվ. ՌՃԿԷ»։ Սորա ժամանակը պիտի շինուած լինի, գուցէ նորոգուած, եկեղեցու թմբուկը. «Շինեցաւ սբ. կղկէս. / Տիկեցի Մալխասի որդի Մարքարէս թվ. ՌՃԾԴ» (= 1705)։ Գմբեթի թմբուկը բոլորակ է, հիմքից ոչ շատ բարձր ութ լուսամուտներով (պատկ. 19)։

Ղազար ճահկեցու մի կոնդակից տեղեկանում ենք, որ 1749 թուին վանքի առաջնորդն էր «Մարկոս հանճարեղ և աշխատաւոր վարդապետ»ը, որին թոյլ է տալիս կամ սորա միաբաններից մէկին ժողովրդից նուէրներ հաւաքելու եկեղեցու խախտուած տանիքը նորոգելու համար(***)։ Մի տարի յետոյ՝ վանքի արևմտեան դրան ճակատին թողած արձանագրութեան համեմատ նոյն Մարկոս եպիսկոպոսը գնել է 1750 թուին Մկրտիչի որդի Եղումից Ծատուրի կէս օրավար այգին, մի չարէք հողով և մի զանգակ (Ցաւել. Ա. 183)։ Մեր ձեռքն է հասել հէնց այն վաւերագիրը, որով կատարուել է այդ գնումը վկաների յիշատակութեամբ, ինչպէս և ոմանց կնիքներով հաստատուած։ Վաւերագիրը գրուած է նոյն ՌՃՂԹ թուին Օձոպեցի Մկրտիչի որդի Եղումի կողմից, որով յայտնում է, թէ «ծախեցի մեր Ծատուրէնց այգին Օձոպա վանից առաջնորդ Մարկոս վրդ.ին» քսան և վեց հազար դրամով.

(*) Խաղբակեանք Ա., եր. 251 - 252։

(**) Սմբատեան, երնջակ, եր. 242-3։ Թովմեան, Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ վ.ի, Բ. 3։

(*) Խաղբակեանք Ա., եր. 253 - 4։

(**) Սիսական, եր. 483։

(***) Սմբատեան, երնջակ, եր. 436։